

Նոր եկեղեցւոյ շինութեան հարցին մէջ, սկիզբէն՝ միտքերը զբաղեցնող կարեւորագոյն կէտերէն մին էր եղած ճարտարապետական ոճը: — Պէ՛շն էլ Սուրէշնի տաճարը կառուցուած էր ծածկուած չորս պատերու ամէնահասարակ ձեւով. Աղեքսադրիայինը՝ բոլորովին եւրոպական ճաշակով, գոթիկ ճարտարապետութեամբ, որ չ'խօսիր հայ զգացումներուն:

Արդ երկու եկեղեցիներուն եւս շինութեան թուականին, ո՛չ ոք կրնար տակաւին խորհիլ հայկական արուեստի մասին: Կ. Պոլիս և մերձաւոր Անատոլիոյ քաղաքներու մէջ, ուսկից եկած էր Եգիպտոսայ դաղութի մեծամասնութիւնը, գրէթէ բոլոր հայ եկեղեցիները կառուցուած էին, սովորական, առ առաւելն, սիւնաղարդ Պազելիք-ի սաղաչէն ձեւով, ընդարձակ և կարելի եղածին չափ մեծ բազմութիւն պարունակելու մտահոգութեամբ միայն յառակագծուած: Հին Հայկական գաւառներու պատմական եկեղեցիները, որոնց ախպարներն էին Ալաշկերտի Բազրեւանդեան Ս. Յովհաննէսը, Աղթամարի Ս. Խաչը և Մշոյ Ս. Կարապետը, իրենց պատմական սահմաններուն մէջ կղզիացած, թանգարանական հնութիւններ էին այլեւս: Ու էջմիածնի, Անիի և Արարատեան աշխարհի գմբէթներն ու կաթողիկէները, և պատկերներով հաղուադէպ ճամբորդներու պատմուածքներովը միայն ճանչցուած Արեւմտեան Հայութենէն, երազային գեղեցկութեան մը ազդոււմ միայն կրնային ունենալ ամէնուն վրայ:

Իրերու վիճակը հիմակ փոխուած էր սակայն, 1894-95-ի հայկական ջարդերէն վերջը, ամէն ինչ որ ազգային էր, — եկեղեցի, լեզու, պատմութիւն, գրականութիւն և գեղարուեստ — սիրտերու մէջ աւելի խորունկցուցած էր ազգային մտածումն ու սէրը, և այս՝ անոնց համար մանաւանդ որ, արիւնի և կրակի այդ մըրիկներէն մազապուր, ելած էին ապաստան փնտռել թուրքիոյ արտասահմանեան երկիրները, ուր հայրենիքի և անոր սրբութեանց կարօտը ամէն օր նոր ոգեկոչումներով կ'սաստկանար իրենց մէջ:

Խրիմեանի և Իզմիրլեանի Հայրապետական ընտրութենէն դարձող պատուիրակները, հայկական հին յիշատակներու հետ, տեսակ մը անուշ փայփայանքով միասին բերած էին նաեւ